

ԿԱՐԾԻՔ

ՌԱՖԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՎՐՈՏԻԶՄԻ ՍՈՑԻԱԼ-
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԻՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ» (ԲՈՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)
ԺԹ.00.03 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍԻԴԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսական աշխատանքը նվիրված է ժամանակակից հոգեբանության համար արդիական և բազմաշերտ հիմնախնդրի՝ սոցիալական նկրոտիզմի ֆենոմենի տեսական, հայեցակարգային և փորձարարական ուսումնասիրությանը՝ իմիգրացիոն գործընթացների, մասնավորապես բռնագաղթի համատեքստում: Աշխատանքը ընդգրկում է սոցիալական, անձնային և խմբային հոգեբանության սահմանագծում գտնվող հարցադրումներ՝ միավորելով սոցիալ-միջավայրային պայմանների, անձի խոցելիությունների և հոգեբանական հարմարման փոխկապված ուսումնասիրությունը: Ատենախոսությունը կառուցված է գիտական հետազոտության տրամաբանությանը համապատասխան՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, գիտագործնական առաջարկներ և հարուստ մատենագիտական բազա: Հեղինակը համոզիչ կերպով հիմնավորում է, որ սոցիալական նկրոտիզմը չի սահմանափակվում անհատական նկրոտիկ դրսերումներով, այլ արտահայտվում է սոցիալական միջավայրում հարմարվելու, ինքնադրսենորվելու, ապագայի իմաստավորման և հուզական ինքնակարգավորման խնդիրների միջոցով: Հատկապես արժեքավոր է այն հանգամանքը, որ թեման ուսումնասիրվում է բռնագաղթած անձանց օրինակով, ինչը թույլ է տալիս սոցիալական նկրոտիզմը դիտարկել ոչ թե աբստրակտ, այլ կոնկրետ սոցիալ-պատմական իրավիճակներում: Այս առումով ատենախոսության թեման լիովին համապատասխանում է ժամանակակից հոգեբանական գիտության առաջնահերթություններին և ունի ինչպես գիտական, այնպես էլ ակնհայտ սոցիալական նշանակություն: Հետազոտության նպատակը ծևակերպված է հստակ և տրամաբանական՝ սոցիալական նկրոտիզմի երևույթի ուսումնասիրություն անբարենպաստ սոցիալ-միջավայրային պայմանների և անձնական խոցելիությունների փոխկապվածության համատեքստում՝ միաժամանակ ուղղված լինելով գործնական մեթոդաբանական ուղենիշների մշակմանը:

Նպատակից բխող խնդիրները բազմակողմանի են և ընդգրկում են՝ տեսական-կոնցեպտուալ վերլուծություն, սոցիալական համատեքստի բացահայտում, իմիգրացիոն գործընթացներում սոցիալական նկրոտիզմի դրսնորումների քննություն, փորձարարական հետազոտություն և վիճակագրական վերլուծություն, գիտագործնական առաջարկների ծևակերպում: Վարկածը և ենթավարկածները տրամաբանորեն բխում են հետազոտության նպատակից և համահունչ են ընտրված տեսական հիմքերին: Դրանք ունեն ստուգելի բնույթ և, ըստ ներկայացված տվյալների, էմպիրիկորեն հիմնավորված են: Առանձնապես դրական է, որ ենթավարկածները ներառում են ինչպես անձնային (նեյրոտիզմ, տագնապայնություն), այնպես էլ սոցիալական (կյանքից բավարարվածություն, խմբային հուսալիություն, փոխկախյալություն) գործոններ: Ատենախոսության տեսամեթոդական հիմքը ներկայացված է լայն և բազմաթերթ տեսական դաշտում: Հեղինակը հմտորեն համադրում է դասական և ժամանակակից մոտեցումները՝ սկսած Զ. Ֆրոյդից, Ա. Աղերից, Կ. Հորնիից մինչև Հ. Այզենկ, Զ. Սահլբերգեր, Ե. Դիներ և այլ հեղինակներ: Սա թույլ է տալիս նկրոտիզմի երևույթը դիտարկել ոչ միայն անհատական, այլև սոցիալ-միջավայրային հարթությունում: Գրականության վերլուծությունը ցույց է տալիս հեղինակի տեսական պատրաստվածությունը և քննադատական մտածողությունը: Միաժամանակ հարկ է նշել, որ որոշ հատվածներում սոցիալական նկրոտիզմի հասկացության սահմանումը կարող էր լինել ավելի հստակ սահմանագծված՝ տարբերակելով այն հարակից հասկացություններից (սոցիալական սթրես, սոցիալական տրավմա, մարգինալություն):

Աշխատանքի ուժեղ կողմերից է կիրառված մեթոդաբանության բազմազանությունն ու ընտրանքի ծավալը: 860 մասնակիցների ընդգրկումը, հիմնական և ստուգիչ խմբերի հավասարակշուրջ սեռային և տարիքային բաշխումը, ինչպես նաև բոնագաղթած և չբոնագաղթած խմբերի համեմատությունը բարձրացնում են արդյունքների հուսալիությունը: Կիրառված հոգեչափական մեթոդիկաները լայնորեն ճանաչված և ստուգված են գիտական պրակտիկայում: Բացի այդ, սոցիալական նկրոտիզմի գնահատման հեղինակային սանդղակի մշակումը գնահատվում է որպես աշխատանքի կարևոր նորարարական բաղադրիչ:

Վիճակագրական վերլուծության ճիշտ ընտրությունը (Spearman, Shapiro-Wilk) և ժամանակակից վիճակագրական ծրագրի օգտագործումը (JASP) վկայում են ատենախոսի մեթոդաբանական գրագիտության մասին: Փորձարարական արդյունքները ներկայացված են մանրամասն և բազմակողմանի վերլուծությամբ: Ապացուցվում են սոցիալական նկրոտիզմի և հետաձգված կյանքի համախտանիշի, սոցիալական ֆրուստրացիայի, տագնապայնության և նեյրոտիզմի միջև դրական համահարաբերակցությունները, ինչպես նաև կյանքի բավարարվածության և խմբային հուսալիության հետ բացասական կապերը:

Հատկապես արժեքավոր է տարիքային խմբերի համեմատական վերլուծությունը, որի արդյունքում բացահայտվում է սոցիալական նկրոտիզմի առավել ուժեղ դրսենորումը 21–50 տարեկան անձանց շրջանում: Սա ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն՝ սոցիալական և հոգեբանական աջակցության ծրագրերի մշակման համար: Աշխատանքի գիտական նորույթը արտահայտվում է՝ սոցիալական նկրոտիզմի սոցիալ-համատեքստային բնութագրմամբ, դրա բաղադրիչների համակարգված վերհանմամբ, սոցիալական նկրոտիզմի բացասական ներուժի նվազեցման մեթոդաբանական մոտեցումների առաջարկմամբ: Տեսական նշանակությունը պայմանավորված է սոցիալական նկրոտիզմի հայեցակարգի հստակեցմամբ, իսկ գործնական նշանակությունը՝ բոնագաղթածների հետ հոգեբանական աշխատանքի, սոցիալական ինտեգրման և կանխարգելիչ ծրագրերի մշակման հնարավորությամբ: Ատենախոսության պաշտպանության ներկայացված դրույթները արտացոլում են հետազոտության հիմնական տեսական, հայեցակարգային և էմպիրիկ արդյունքները և համահունչ են աշխատանքի ընդհանուր տրամաբանությանը, նպատակին, առաջադրված խնդիրներին և ստացված եզրակացություններին: Դրանք ծևակերպված են համակարգված, փոխկապակցված և ներկայացնում են սոցիալական նկրոտիզմի երևույթի ամբողջական սոցիալ-հոգեբանական մեկնաբանությունը՝ իմիգրացիոն գործընթացների համատեքստում: Առաջադրված դրույթներն ունեն հիմնարար բնույթ և հանդիսանում են ամբողջ հետազոտության հայեցակարգային առանցքը: Արաջադրված դրույթների ուժեղ կողմն այն է, որ սոցիալական նկրոտիզմը ներկայացվում է որպես բազմաբաղադրիչ ֆենոմեն, ինչը թույլ է տալիս այն դիտարկել սոցիալական միջավայրում անձի վարքի, հույզերի և ինքնակարգավորման խախտումների համատեքստում: Նրանք գիտական առումով նորարարական են և առանձնահատուկ արժեք ունեն: Հետաձգված կյանքի համախտանիշի ընդգրկումը սոցիալական նկրոտիզմի գնահատման կառուցվածքում հիմնավորված է էմպիրիկ արդյունքներով և կոռելյացիոն

Վերլուծությամբ: Դրույթները լիովին համահունչ են աշխատանքի փորձարարական բաժնում ստացված տվյալներին: Սոցիալական ֆրուստրացիայի և տագնապայնության բարձր մակարդակների բացահայտումը բռնագաղթած անձանց շրջանում ներկայացված է վիճակագրորեն հիմնավորված և տրամաբանական մեկնաբանությամբ, միաժամանակ ընդգծվել է սոցիալական նկրոտիզմի դրսենորման դինամիկ բնույթը՝ պայմանավորված նոր սոցիալական միջավայրի պահանջներով, անորոշությամբ և աղապտացիոն ռեսուլսների սահմանափակմամբ: Այն ունի բարձր գործնական արժեք հոգեբանական աջակցության և կանխարգելիչ ծրագրերի մշակման տեսանկյունից, հիմնված է հետազոտության համահարաբերակցային վերլուծության արդյունքների վրա և ներկայացնում է սոցիալական նկրոտիզմի սոցիալ-կառուցվածքային հետևանքների կարևոր ասպեկտը: Կյանքից բավարարվածության և խմբային հուսալիության հետ բացասական կապերի բացահայտումը վկայում է, որ սոցիալական նկրոտիզմը ոչ միայն անհատական, այլև խմբային մակարդակում է ազդում սոցիալական փոխազդեցությունների որակի վրա: Պետք է նշել նաև հետազոտության մեթոդաբանական բազմակողմանիությունը և սոցիալական նկրոտիզմի գնահատման համար կիրառված խմբային մակարդակի գործիքների կարևորությունը: Այն վկայում է, որ սոցիալական նկրոտիզմը գնահատվում է ոչ միայն անհատական, այլև ներխմբային փոխազդեցությունների համատեքստում:

Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և հրատարակված գիտական հոդվածներում: Այնուամենայնիվ ներկայացված ատենախոսության մեջ առկա են որոշ նկատառումներ, որոնք մեկնաբանության կարիք ունեն:

Եվ այսպես՝

- Աշխատանքում սոցիալական նկրոտիզմի հայեցակարգը բազմակողմանիորեն վերլուծված է, սակայն որոշ հատվածներում դրա սահմանումը ներկայացվում է տարբեր ձևակերպումներով: Ցանկալի կլիներ, որ տրվեր սոցիալական նկրոտիզմի առավել կոնցեպտուալացված և սեղմ սահմանում՝ այն հստակ տարբերակելով հարակից հասկացություններից:
- Սոցիալական նկրոտիզմի գնահատման հեղինակային սանդղակը ներկայացվում է որպես կարևոր մեթոդաբանական նորոյթ, սակայն աշխատանքի մեջ բավարար չափով չեն լուսաբանվում դրա վավերականության և հուսալիության ցուցանիշները:
- Թեև աշխատանքում շեշտվում են սոցիալ-միջավայրային պայմանները, ցանկալի կլիներ ավելի խորությամբ վերլուծել մշակութային և սոցիալ-տնտեսական

գործոնների ազդեցությունը սոցիալական նկրոտիզմի ձևավորման վրա, հատկապես տարբեր բռնագաղթային փորձառություններ ունեցող խմբերի համատեքստում:

- Հետազոտությունում կիրառված տարիքային խմբավորումը ընդհանուր առմամբ տրամաբանական է, սակայն աշխատանքում բավարար չափով հիմնավորված չէ հենց այս միջակայքների ընտրության տեսական կամ մեթոդաբանական պատճառաբանությունը:
- Սոցիալական նկրոտիզմի հաղթահարմանն ուղղված գիտազործնական առաջարկները հետաքրքիր են և արդիական, սակայն ցանկալի կյիներ դրանց կիրառման կոնկրետ օրինակների կամ փորձարկման հնարավոր մեխանիզմների առավել մանրամասն ներկայացումը:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ նշված դիտարկումները չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը: Ակնառու է, որ ատենախոսն իրականացրել է իսկապես մեծածավալ տեսական և փորձարարական հետազոտություն, որն ունի տեսական և կիրառական մեծ նշանակություն:

Եզրակացություն

ՌԱՖԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՎՐՈՏԻԶՄԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ» (ԲՈՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ) ատենախոսությունը ավարտուն, գիտական պատշաճ, գրագետ մակարդակով աշխատանք է: Այն իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Ռաֆիկ Պետրոսյանը «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հավակնած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ *Արմեն Ա. Մուրադյան*

Մասնագետի (Արմինե Մուրադյանի) ստորագրության հսկողությունը հաստատում եմ՝

Ռուս-հայկական համալսարանի գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու



Դ.

Կասաբաբովա